



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2017 թվականի թիվ 76 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 30-րդ կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 2-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ բաժնի 6-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) «<ժա>> և «<ժբ>> ենթակետերից հանել «և քաղաքացիական ծառայողների ատեստավորման» բառերը,
- 2) «<ժդ>> ենթակետից հանել «և այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների» և «և ատեստավորման» բառերը,
- 3) «<ժ>> և «<ժգ>> ենթակետերը ճանաչել ուժը կորցրած.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մարզպետի ժամանակավոր պաշտոնակատար՝



[Signature] Կ. ԱԴԱՄՅԱՆ

2017թ. մարտի 15
ք. Իջևան